





891.93

Ա-51

## Ի ՎԵՐԱՅ

# ԼԵՐԱՆՑ ԽՆԿԱԲԵՐԱՑ

(Երգ Երգնց. Բ. 17.)



Հայոց  
Ա 26777

Ողեաց

ՍԱՅԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՄԱԾՈՒՆԻ

Միաբան Մայր Ալթոռոյ Ս. Էջմիածնի



1913

Վաղարշապատ տպարան Մայր Ալթոռոյ Ս. Էջմիածնի

Եկեղեցական տպարան Մայր Ալթոռոյ Ս. Էջմիածնի



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Կ

S. S. Գ Ե Ո Ր Գ Ա Յ Ե.

Վեճափառ եւ Մրազնագոյն Կաթուղիկոսի

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ի յիշատակ հանգուցիալ ծնողաց իմոց—**

**ԳԵՐԲԳԱՅ (Քրտենց)**

**ՔԻԾՄԻԾԻ (Մուշոնց)**

**ԲԵՐՔ ՆՈՒԷՐ որդիական**

*Մահակ վարդապետ Ամասունի,*



Թէ լաւ մթերց առևտուր  
Ընդ աշխարհաց ընդհանուր  
Է առնազն վաճառական,  
Այսպէս ընդ մեր սիրո տխուր  
Բուռն սիրոյ, բերկրութեան  
Միշտ առնազն առևտուր  
Երգն է միայն պատռական:

ի կ 2.

«Գիտերի մեջ իս բնիւրը երգի եղանակով»

•Քան ձեղ՝ Մասիս Արագած,  
Զէ ստեղծել Հայրն Աստուած  
Իւր բիւրաւոր հանքերից  
Հայի համար մի այլ դանձ.  
Ես կուզէի յաւիտեան  
Քանի ունիք դուք ստուեր,  
Հայի սերունդն էլ ապրէր:

Ո՞վ դու Հայոց Յորդանան—  
Դերահոչակդ Հրազդան,  
Քանի քեզ հետ շատ գետեր  
Դեռ ման կզան Հայաստան,  
Ես կուզէի յաւիտեան  
Քանի ունիք դուք փրփուր,  
Հայը խմէր ձեր սուրբ ջուր:

Դուք՝ Հայրենեացս վայրք արձակ—  
Ծնվ ու ցամաք ու ծըմակ,  
Ո՞ր բանաստեղծն անպարսաւ  
Զեզ զով չասեց՝ ու մեռաւ.  
Ես կուզէի յաւիտեան  
Զեր բերկըութեան տեղ ու դար  
Հային լինէր միշտ դադար:

Թէ որ մեսնէք կողէ կող  
 Հայոց բլուրք դաշտք հովիտք,  
 Սակայն զուք չեք քար ու հող,  
 Այլ զին զբած մարգարիտ.  
 Ես կուզէի յաւիտեան  
 Քանի ծաղիկ, ծիլ ունիք,  
 Հայը ուտէր ձեր բարիք:

Քան ձեղ չկայ մի էակ՝  
 Հայոց վշտին քաջ տեղեակ—  
 Սալամ Սոխակ ու Սարեակ,  
 Կոռւնկ Կաքաւ Կչեղակ.  
 Ես կուզէի յաւիտեան  
 Հայոց հողերն լինէին  
 Ձեր բերկըութեան վարժարան:

Այլ իմ ծովակք Վան Սևան,  
 Որ ձեր տեսքով աննման  
 Կախարդեցիք մէկ Գեղամ  
 Եւ մէկ քնքոյշ Շամիրամ,  
 Ես կուզէի յաւիտեան  
 Որ նոյն սիրով Հայք բոլոր  
 Ձեզ լինէին ուխտաւոր:

Հայոց վանքեր, անտապատք,  
 Մենք հայերս հէք դժբախտ  
 Զեղանով ենք միշտ պահել  
 Հաւատ Լեզու Գիր անխախտ.  
 Ես կուզէի յաւիտեան  
 Քանի կաչքէք դուք յեթեր,  
 Հայը ձեղ հետ միշտ խօսէր:

Զուր էք նստել ողբում շատ  
Դըւին Անի Արաւաշատ,  
Թէ որ դուք էք աւերակ,  
Ապա ո՞րն է շէն քաղաք.  
Ես կուզէի Հայոց մէջ  
Դուք՝ յիշատակ մեր նախնեաց,  
Միշտ մընայիք անմոռաց:

Ի՞նչդ գովեմ կամ յիշեմ  
Հայոցս Աշխարհ մեծ վսեմ.  
Ո՞ր ազդ զրեց քո մէջ թախտ,  
Եւ չանուանեց քեզ Դրախտ.  
Ես կուզէի յաւիտեան  
Թէ դու եղար հային վարդ,  
Հայն էլ լինէր քո իսկ զարդ:

Դուք՝ հայրենեացս հող ու ջուրք,  
Ինչպէս Արայն աչագեղ  
Խւր պապերով հանճարեղ  
Շղթայեցիք իրենց տան,  
Որ շէն պահեն Հայաստան.  
Ես կուզէի յաւիտեան,  
Որ բոլոր Հայք նըանց պէս  
Ապբեն ձեզնից անբաժան,  
Որ շէն պահեն Հայաստան:

---

Ա Յ Ա Բ Ի Գ Ե Ս Լ

(Մատակախաղ ձիոց լիճ)։

Ծըսպածից գէպ հարաւ՝  
Բարձրաւանդակ մի տեղում՝  
Շատ բարեհամ ջրոց հետ  
Կայ մի ծովակ նահապետ։

Եւ ինչպէս որ առում են  
Մեր աշխարհի դարեռը  
Վէպ ու զբոյցք բիւրաւոր  
Նա կոչւում է Այղըր զիօլ։

Գեղեցիկ է Այղըր գեօլ,  
Չունի մի բան իւր բոլոր՝  
Որ չըլինի փառաւոր.  
Գեղեցիկ է Այղըր գեօլ,  
Չունի մի բան հին ու նոր՝  
Որ չըլինի ահաւոր։

Երեք գհից թեք ու ծուռ՝  
Իրեկ գօտի ասղարուր  
Խալտում են ծովակիս  
Արեակէզ թուխ ժայռեր.  
Իսկ մի գհից ուր Մասիս  
Թափում է իւր սուրբ պատկեր  
Ծեր Արաքսի ջրոց մէջ,  
Եւ լող տալիս նըանց մէջ,  
Ունի ծովակս լայն ու նեղ  
Անց ու դարձի մուտքի տեղ։

Մանենք այժմ այս ծովակ  
Որի գեղով ըզմայլեց  
Հայկի որդին Արմենակ.  
Նա՝ որ սիրեց Արագած  
Քան զամենայն արարած։

Մեր հայրենի այս ծովակ  
Որ կոր է ինչպէս ակ,  
Որպէս շատերն են ասում  
Ոչ տուտ ունի և ոչ տակ,  
Թէ որ ակից, որ ծակից,  
Թէ որ հոգի յատակից  
Զուր է խմում լիուլի  
Եւ ծովանում գողունի,  
Այս բան զիտէ մէկ Աստուած,  
Մէկ էլ ինքն Արագած։

Այսպէս անշարժ ծով կտրած  
Նա կանգնած է վեհապահնձ  
Իւր սոփ տակ թաւալող  
Մեծամօրի քիալ դիմաց.  
Եւ զերդ նշանար, սուրբ հաղորդ  
Նա զրկում է այս դետին  
Իւր ջրերի աւելորդ,  
Բայց այս ոչ թէ աշկարայ  
Իւր լայնանիստ ափերից,  
Այլ ի ծածուկ ակամայ  
Իւր խորագոյն յատակից։

Տեսնենք թէ, էլ ի՞նչ ունի  
Այս ծովակը զեղանի։

Ծաղկի, ծառի, թփի տեղ  
 Խւր ճըմճմայ ափերում  
 Ուղիղ կամ թեք, կամ առշեղ  
 Դարէ ի դար կան ցցուած  
 Միայն եղէդ ծառացած.  
 Որոց շաչիւն շառաչիւն  
 Ինչպէս գոմիոռ շան հաջիւն,  
 Թափում են մահ ու սարսափ  
 Հէք անցորդի լողի  
 Մարմնոյ վրայ զերթ տարափ,  
 Զի զիլ քամին մոլեզին  
 Երբ շարժում է եղեզին,  
 Քար ու քռայ քարանձաւ  
 Ծղրտում են առանց ցաւ:

Այսպէս այստեղ զօրն ի բուն՝  
 Մինը յայտնի, մինը թաքուն,  
 Մինը արթուն, մինը քուն  
 Ծղրտում են ու ծըւում,  
 Ժըւժըւում են ու ժըւում  
 Պէս պէս թոչուն ու զեռուն.  
 Իրենց խինդ, իրենց խնդիր,  
 Իրենց սրտի ցաւ ու խոց  
 Հանապաղ աւանդելով  
 Արագածի երկնայնոց:

Բատ ասութեան մեր հին հարց  
 Սրա մէջ են և ապրում  
 Նժոյդ ձիեր սոկեսանձ,  
 Ուժեղ գոմէշք քաջալանջ  
 Եւ հրէշներ մարդախանձ.

Որոնք արօտ դուրս գալով  
 Առաւօտից առաւօտ  
 Իւր սիզաւէտ ափի մօտ,  
 Խառնըւում են սանձարձակ  
 Այստեղ զիմող, արածող  
 Զիոց գոմշոց երամակ.  
 Եւ այս տկար անարի  
 Էակներից հողեղէն  
 Մեղ պարզեւում իրենց պէս  
 Զաղ ու քուոակ հրեղէն.  
 Իսկ հրէշներ մարդախանձ  
 Ինչ ափին են մօտենում,  
 Կամ ջուրն ընկնում, կամ լողում,  
 Կուլ են տալիս ողջ հում հում:

Ահա այս է իսկ պատճառ՝  
 Որ մարդն իրեն ապիկար  
 Միշտ զգալով վախել է  
 Այս ծովակից ահահար,  
 Չըկանգնելով ոչ երբէք  
 Մրա մօտին մի զադար.  
 Եւ ծովակս աննման՝  
 Սիրուն ինչպէս մեր Սիան,  
 Սրմենակի օրերից  
 Եղել է միշտ քնութեան,  
 Զեռնոց, թռչնոց վարժարան.  
 Օքնեալ լինի Հայաստան,  
 Որ առւել է իւր որդւոց  
 Այսպէս լճեր սրբազան:

---

Ի ՔԱՅՆ ՎԱՐԴԱՆ

«Ո՞նց կաս իմ լուսնակը երդի եղանակով՝

• Ընդ ամենայն երկիր ել քարրառ նորա, եւ  
մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նորա»:

Սաղմոս

**ԹԵՇ** որ ամպերէն ուրախ, համարձակ  
Դան զլուխ հանեն սուրբ Մեսրոս Սահմակ,  
Եւ հարցնեն ինձնից, թէ ովք է Վարդան,  
Որին ոչ երկրում, ոչ վերև տեսան.  
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,  
Վարդան երբ ծընաւ՝ նոքա մօմն էին:

Թէ թուղթ և մատեան ձեր առաջ հանեն  
Ղեռնդեան սուրբ հարք առճարաց բեմէն,  
Եւ հարցնեն ձեզնից, թէ ովք է Վարդան,  
Որ իւր Վարդ անուն փոխել է Վարդան.  
Գուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,  
Վարդանիս անուն նոքա կնքեցին:

Թէ որ Վարդանիս նազելի մայր տատ  
Այսպէս խեղճ սըրբից խօսեն անընդհատ,  
Թէ ովք էր այն քաջ, սէգ գեղադիտակ,  
Որին չըտուին ոչ կաթ ոչ խըրառ.  
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,  
Վարդան մեծացաւ հէնց նոցա ձեռքին:

Թէ ձեր տանեաց շուրջ բոլորին ծիծառք,  
Ու երդուեն ձեզ թէ, իրենց նախահարք  
Ամեն ծածկի տակ դըրին ըոյն, դարան,

Միայն Վարդանի տանիք շունչ չ'առան.  
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,  
Վարդանիս բերան նոքա երգ դըրին:

Թէ Աւարայրից Արոէն և Արտակ  
Հայոց գնդերից բերեն ինձ նամակ,  
Որի մէջ երդուեն, թէ Հայոց քաջին  
Չեն ծանօթ բընաւ հայ զօր զօրավարք,  
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,  
Վարդանիս ընկերք այդ քաջերն էին:

Թէ դարիւ դարիւ Եղեմի գետեր  
Գան մըումըուալով ծեծեն ձեր կողեր,  
Եւ հարցնեն ձեզնից, թէ ով էր Վարդան,  
Որից Եղեմին բարև չըտարան.  
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,  
Վարդան թէ ապրեց՝ նոքա ջուր տուին:

Թէ որ վանքերից ձայն տան անդադար  
Անուշն Եղիշէ ու ճարտարն Ղազար,  
Եւ հարցնեն ինձնից, թէ ով է Վարդան,  
Որին չըտեսած՝ հոգեվարք եղան.  
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին.  
Մեր սէր Քաջի հետ նրանք կապեցին:

Թէ որ ձեր հանդէս զլխով ալեսոր  
Մեր սեպուհ սարեր կանգնեն զլխակոր,  
Ու այս ձեւ խօսեն, որ իրենց ծնկան  
Երբէք չէ ննջել իմ անուշ Վարդան.  
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,  
Վարդան զօրացաւ նոցա թերին:

Թէ որ Արտազից տիսուր և տրտում  
Դէպ ինձ դարձ առնեն շուշան և քըքում,  
Եւ ասեն այսպէս, թէ ինչու Վարդան  
Հայոց քաջաց հետ չ'ելաւ Շաւարշան.  
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,  
Վարդան նոցա ծոց տուեց իւր հոգին:

Բայց թէ մեր Տիկնայք հայոց աշխարհին  
Յառնեն համբաւեն, որ քաջ Վարդանին  
Ոչ մարտի կրկէս, ոչ ի մէջ քաջաց  
Տեսան Խաչ ձեռին մահաշունչ ընկած,  
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,  
Վարդան երբ մեռաւ՝ նորա գոյժ բերին  
Հայոց աշխարհին:

Հայոց աշխարհին, որ միայն Վարդան  
Իւր հետ հեծեծանք քաշեց անբաժան.  
Հայոց աշխարհին, որ միայն Վարդան  
Տաք արիւն թափեց նորա փրկութեան.  
Հայոց աշխարհին, որ միայն Վարդան  
Իւր ժանտ թշնամիք դըրեց գերեզման.  
Հայոց աշխարհին, որ միայն Վարդան  
Իւր մաքուր ժամեր, իւր լեզու, հաւատ  
Տուեց մեղ խրատ, պահել անարատ:

Իսկ թէ հայ Մուսայք տաղերով պնդեն՝  
Երկինք երկիր էլ վկայ մէջ բերեն,  
Որ Հայոց սրաի սեղանի վերայ  
Երբէք չէ տօնուել անուն Վարդանայ.  
Որ ճշմարիտ հայ չէ եղել Վարդան,  
Եւ ոչ էլ Հայոց եղել է պաշտպան.

Ես էլ ձայն կըտամ՝ բոլոր աշխարհին,  
Որ այդ անձ արբշու, այդ անձ անօրէն  
ԶԵ եղել վարդան, այլ վասակ Սիւնին:

---

### ՅՈՒԳՈՐ ՎԵՐԴԱԵՆՑ ԻՒԹ ԶՈՒԿՈՆՆԵՐԻՆ

**ԱՎ** դուք իմ քաջ զօրականք, ելնենք միաբան  
Թշնամու դէմ կռուել, ազատել Հայաստան:

Պատրաստ պահենք սուր սուսեր, վահան մեր ձեռքին,  
Խողիողել անխնայ մոլեսանդ նենգ Պարսկին:

Յիշենք անցած քաջերի կենաց պատմութիւն,  
Ներկենք մեր արդար սուր ի թշնամեաց յարիւն:

Դուք հսկայից էք որդիք, նախատինք է ձեզ  
Աւար առնող վիշտալին դառնալ ծառայ հեզ:

Դիմենք փութով աներկիւդ ի դաշտն Աւարայր,  
Այնտեղ ընկնենք, այնտեղ թաղուենք մենք քաջաբար:

Զը վհատինք եղբայրներ, հոգւով միանանք,  
Սպաս Աստրծուն յիշենք, յառաջ ընթանանք:

---

### Ք Ն Ա Բ

**Ա**նուշ ձայն ունիս Քնար,  
Քեզ մօտ կայ բազում հնար.  
Ես վարդ լինիմ, զու սոխակ,  
Այրուինք մէկմէկուս համար:

Քո մօտ հեք, ցաւած սըտեր  
Բաց թողին իրանց դարտեր.  
Քո մօտ խեղճ կաղեր, կոյրեր  
Մոռացան իրանց վշտեր:

Քանց բաղի ըլլուլի ձէն,  
Երնկշնկան ուրախ ջրէն,  
Քանց զըղղուն սարի հովէն  
Անուշ են սըմերիդ ձէն:

ՀԱՅՈՒԹՔՆՔ ԸԹ ԿԹՈՒՆԿՆ.

«Նաջիբը ին համարի» թուրքերէն երգի եղանակով.

Հ 1.964  
A26777

Կնցար սարեր, դաշտեր ձորեր,  
Հայ պանդխախին դու ուր թողեր.  
Եկ պատմէ ինձ նորա վշտեր  
Սիրուն թըռչուն,  
Հաստատուն առ ու բեր իւր ողջոյն  
Ենմխիթար իմ սալարած չոր հոգուն:  
Զմեսն եկաւ, քեզ ասլաստան  
Դու մի ընտրիլ օտար սահման.  
Արի կաց դու իմ օթեան  
Սիրուն թըռչուն,  
Հաստատուն առ ու բեր իւր ողջոյն  
Ենմխիթար իմ սալարած չոր հոգուն:

Իմ եղբայրն էր այդ տարագիր,  
Որ երամով, կըտի ասով  
Նստաք զնացիք իւր արտերով  
Սիրուն թըռչուն,



Հաստատուն առ ու բեր իւր ողջոյն  
Անմիտիթար իմ սալարած չոր հոգուն

Թէ ուր արդեօք ծըլկուեցաւ,  
Մերկ ու բորիկ, քաղցած ծարաւ,  
Եյս լուրը բեր զու ինձ համար  
Սիրուն թլուչուն,  
Հաստատուն առ ու բեր իւր ողջոյն  
Անմիտիթար իմ սալարած չոր հոգուն.

---

«Ըիւղ ՓԱՌԱՅ ԱՆՑՈՒՅԻ».

Մովսես Խոր. Բ. ԺԳ.

**Աշխարհէ աշխարհ,** ծովէ ծով անցար,  
Յաջող անվաս արիր տուրիառ.  
Այսպէս քո կեանքի շահարեր նաւակ  
Բերեց ու հանեց քեզ փառաց վիճակ.  
Բայց չեմ երանիլ քեզ՝ Վաճառական,  
Մինչև չըտեսնեմ քո յետին վախճան:  
  
Անբաւ մեծութիւն, զոյք զանձ անսալառ  
Քաջ կրեսսի պէս զու էլ ձեռք բերար.  
Ապրում ես անհող, հանդիսատ ամեն ժամ,  
Խնչպէս որ Եղեմ ապրեց հայր Աղամ.  
Բայց չեմ երանիլ քեզ՝ ազնիւ Հարուստ,  
Մինչև չըտեսնեմ քո յետին ապրուստ:  
  
Լողում շողում ես ականց ծովի մէջ,  
Խնչպէս Շամիրամ Վանայ ծովի մէջ,  
Չեկաւ մի դըշխոյ այս աշխարհի դուռ,  
Որ քո պէս կապէր նարօտ ոսկեհուռ.

Բայց չեմ երանիլ քեզ՝ աղնիւ Տիկին,  
Մինչև չըտեսնեմ քո վիճակ յետին։

Հրձւում ինդում ես ինչպէս երեխայ,  
Կարծես Մայիս է թառել քո վերայ,  
Թէ որ քեզ պճնած տհանէր Անահիտ,  
Ճիշտ սիստի կարծէր շարած մարդարիտ.  
Բայց չեմ երանիլ քեզ՝ ով Օրիորդ,  
Մինչև չըտեսնեմ քո փառքը յետնորդ։

Բընութեան ձեռքից ծընար բարերախտ,  
Ընկար մօրդ գիրկ իրրե չքնաղ վարդ.  
Աստուած թէ վարդին պատուաստեց հոտով,  
Քեզ էլ ըզմոսեց հանճարով ձիրքով.  
Բայց չեմ երանիլ քեզ՝ Մաննեկ տհաս,  
Մինչև չըտեսնեմ քո վերջին օրհաս։

Աճեցին քո մէջ դէտ հոկայ կաղնիք,  
Փրփրոտ բերանով Աէր Եռանդ և կիրք.  
Ապրում ես աղատ, սէդ սօս ու զուարթ,  
Քո պէս երջանիկ չըկայ ոչ մի մարդ.  
Բայց չեմ երանիլ քեզ՝ Երիտասարդ,  
Մինչև չըտեսնեմ քո վերջ և քո բախտ։

Դարբին քեզ տուեց մահարեր սուր, զէն,  
Տաք սիրտ էլ առար դարբընի բովին,  
Ելար զոռ մարտեր, խոյացար սարեր,  
Գետին փըռեցիր յաղթական քաջեր.  
Բայց չեմ երանիլ քեզ՝ կարիչ Զինուոր,  
Մինչև չըտեսնեմ քո փառքդ բոլոր։

Պաղել են քո մէջ աշխայժ և վառ խանդ,  
Որոնցով արիր աշխարհ քարուքանդ.

Այժմ տանըդ մէջ նստած լուռ հանգարտ,  
Անցնում ես ուրախ օքեր բարեբախտ.  
Բայց չեմ երանիլ քեզ էլ Ծերունի,  
Քանի քո վերջն էլ դեռ չէ ինձ յայտնի:

Թէ որ մշտավառ Արե ու Լուսին՝  
Ծիծաղ էլ ծանակ իրենց երեսին  
Գան խօսեն ինձ հետ, թէ իրենց փայլքով  
Պիտի աշխարհին պահեն իւր փառքով,  
Ես չեմ երանիլ նոցա էլ փայլքին,  
Քանի նոքա էլ մեզ պէս վերջ ունին:

Կամ թէ բարձրուղէշ Կաղամախ նոճիք,  
Ինձ հաւատացնեն, թէ անվերջ տարիք  
Պիտի վերձեմեն ի գոզ Լիքանան,  
Պիտի ուռճանան մեր լեռանց ծընկան,  
Նոցա էլ երբէք չեմ երանիլ ես,  
Քանի նոքա էլ վերջ ունին մեզ պէս:

Այլ ես կերանեմ այն Վաճառողին,  
Որ արդիւնք կըտայ յօդուտ իւր աղդին,  
Ես միշտ կերանեմ այն ճոխ Մեծատան,  
Որ միշտ սովելոց կըկանդնէ պաշտան.  
Ես բիւր երանի կըտամ այն Տիկնոջ,  
Որ միշտ կըկրթէ իւր որդիք բողբոջ.  
Ես միշտ կերանեմ այն Օրիորդին,  
Որ ամբիծ վարքով կապրէ ըստ կարդին,  
Ես բիւր երանի կըտամ այն Մանկան,  
Որ միշտ կըձգտի մեծ բարի անուան.  
Ես կերանեմ այն Երիտասարդին,  
Որ միշտ կըփայլէ զործերով անդին.  
Ես բիւր երանի կըտամ այն Քաջին,

Որ միշտ հետևող կը լնի վարդանին,  
Ես միշտ կերանեմ այն ժիր Ծերունոյն,  
Որ հոգի կը տայ իւր ազգի սիրոյն:

Իսկ թէ չենք ապրիլ մենք այսօրինակ,  
Իրաւ եմ տում, մեզ և մեր փուչ փառք  
Կողքանք կ'աղաւենք մենք էլ դառնապէս,  
Ինչպէս որ ողբաց մեր քաջն Արտաշէս:

### ԱՆՁՈՒԿ ԵՒ ՏԷՐ.

«Ո՞ւ է մարդ, որ կեցցէ եւ ո՛չ տեսցէ զմահ»:  
Սադմու ԶԲ. 49:

**Երբ** իմ թուխ աչեր, ժպիտ քաղցրապէս  
Դեռ նոր եմ տուել իմ հօր լոյս երես,  
Երբ իմ մօր տուած իմ լեզու բերան  
Դեռ նոր եմ բացել իրրե երգարան.  
Ինձ մի տուր դեռ մահ, ով Տէր բարերար,  
Գուցէ ես շատին լինեմ մխիթար:

Երբ իմ մանկութեան թողած խանձարուր,  
Ճեմում եմ ազատ դաշտ հովիտ ըլուր.  
Եւ իմ խնդութեան ճիշ ու աղաղակ  
Դեռ նոր են առնում վարդն ու մանիշակ.  
Ինձ մի տուր դեռ մահ, ով Տէր բարերար,  
Թող որ ես տեսնեմ, ինչ է այս Աշխարհ:

Երբ ձեռքս առած զբքերի կապոց  
Դեռ նոր եմ գնում, գալիս հայ գալրոց.  
Եւ անհոգ զուաթթ, սրտով եռանդոտ  
Դեռ նոր եմ առնում ուսման համ ու հոտ.

Ինձ մի տուր դեռ մահ, ով Տէր բարերար,  
Գուցէ ևս շատին լինեմ օդտակար:

Երբ ծոցս զրած զիտութեան ոլտշար,  
Դեռ նոր եմ մտել մեր Հայոց Աշխարհ,  
Եւ սիրով անխոռով իմ ուսման բարիք  
Դեռ նոր են առնում ինձնից հայ մանկափ.  
Ինձ մի տուր դեռ մահ, ով Տէր բարերար,  
Գուցէ ևս շատին առմ խելք ու հանճար:

Երբ իմ վաստակած և անզօր ձեռքեր  
Դեռ նոր են կանգնում դպրութեան շէնքեր.  
Դպրութեան շէնքեր՝ որ իմ հէզ Ազգին  
Պիտի ընձեռեն բարութիւն անզին.  
Ինձ մի տուր դեռ մահ, Աստուած աստուծոց,  
Գուցէ շատ բարիք թափեմ ևս իւր ծոց:

Երբ ևս շրջում եմ շէն քաղաք և զեղ  
Ես ի՞նչ վաստաթիւն չեմ տեսնում այնուեղ.  
Ել չեմ հովանում, երբ ոմանք ազատ  
Զե՞ն յարգում անզամ Հայութիւն Հաւատ.  
Ինձ մի տուր դեռ մահ, ով Տէր բարերար,  
Գուցէ ևս շատին լինեմ փրկարար:

Երբ իմ փրկարար խրատ ու յորդոր  
Դեռ նոր եմ կարդում հայերին բոլոր,  
Որ ատեն զեղիս կեանք, ատեն մոլութիւն,  
Եւ զազտ և յայտնի չ'աւբեն միմեանց տուն.  
Ինձ մի տուր դեռ մահ, ով Տէր բարերար,  
Գուցէ ևս պէտք զամ շատ հայի համար:

Երբ դու ինձ անհուն շնորհք ևս տուել,  
Ու ինձ նրանց մէջ լողուոր ևս դրել.

Ես էլ այդ շնորհք, երբ թղթի թևով  
 Դեռ նոր եմ հանում մարդկութեան յորդ ծավ.  
 Ինձ մի տուր զեռ մահ, ով Տէր բարեցար,  
 Թող որ զեռ զըրեմ իմ ցաւոց տումար:  
 Երբ օր խիստ զուարթ, և օր յուսահատ  
 Մաշում եմ կեանքս տոռղջ կամ հիւանդ,  
 Եւ իմ մէջ անզուսպ բարի ձգտումներ  
 Ուռել են փոռել իբրև մի եփրատ.  
 Ինձ մի տուր զեռ մահ, ով Տէր բարեցար,  
 Մինչեւ ես նոցա չ'ածեմ ի կատար:

Այլ երբ կը հասնեմ ես խոր ծերութիւն,  
 Եւ ինձ կը տանջեն տոտաղանք և քուն,  
 Երբ իմ բարելաւ ըղձեր նպատակ  
 Գլխիս կը կապեն զովութեան պսակ,  
 Յայնժամ Տէր անմահ,  
 Աղա տուր ինձ մահ.

### Բ Ա Ղ Ա Ք.

«Ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն. ո՞վ  
 ուրախացի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս»  
 Մօվսէս Խօր. Գ. ԿԸ.

**Թ**է զիւղ թէ քաղաք, աւան ամայի  
 Բացինք զպլոցներ ամենայն տարի.  
 Եւ թուղթ և մելան, զրիչ և զըքեր  
 Տուինք հայ աղջկայ և տղի ձեռքեր.  
 Մինչ դպրոցասէր մենք չունինք մարդիք,  
 Ո՞վ պիտի յարդէ մեր վաստակ և ճիգ:  
 Մեր զլուխ մեր անձ տուինք քարէ քար,  
 Մտանք հանճարեղ իմաստնոց կաճառ.

Առվրեցինք պէս պէս լեզու և ուսում,  
Որպէս զի պէտք դանք Հայ դպրոցներում.  
Երբ մեր արժանիք ճանաչող չունինք,  
Ո՞վ պիտի յարգէ մեր ուսման բարիք:

Ամեն օր կանուխ դպրոց անդադար  
Դիմում ենք կրթել մեր միտք և հանձար,  
Որպէս զի երբեմն մեզնով անստան  
Ծաղկէ ու ծըլէ բոլոր Հայաստան.  
Երբ մեզ քաջալեր չունինք մարդ ընտիր,  
Ո՞վ պիտի յարգէ մեր ուսում և գիր:

Արեւլը հիւսիս, արևմուտք հարաւ  
Ուր որ տարաբախտ Հայը սոք դրաւ,  
Իրրե տուաջնորդ նորա կոյր կեանքի,  
Շնչել ենք իւր մէջ աղնիւ սիրա հոգի.  
Մինչդեռ անտարբեր են մեր ժողովուրդ,  
Ո՞վ պիտի յարգէ մեր խօսք և խորհուրդ:

Աշխարհիս վայելք առ սան կոխած,  
Ամեն տառապանք աչքի տակ տուած,  
Գրում ենք տպում պիտանի ընտիր  
Քարակէզներ մատեանք, ու շատ լրագիր.  
Մինչ ընթերցաւէր մենք չունինք մարդիք,  
Ո՞վ պիտի յարգէ մեր տաղանդ և ձիրք:

Ելանք շրջեցինք ամբողջ Հայաստան,  
Գծեցինք նորա աւերք ցիր ու ցան.  
Գծեցինք նորա բարձրաբերձ լերինք,  
Մառ ու ծով ծաղիկ և չքնաղ երկինք.  
Մինչ հայրենասէր մենք չունինք մարդիկ,  
Ո՞վ պիտի յարգէ մեր վաստակ ու ձիգ:

Ամոլ եղներով դաշտեր չոր խոպան  
 Ընդ միշտ հերկում ենք, ցանում ցանք ու ցան.  
 Գիներեր այզիք, պահէզք մրգաբեր  
 Դարձեալ մեր ձեռքով են ծաղկել աճել.  
 Մինչ գնահատող մենք չունինք մարդիք,  
 Ո՞վ պիտի յարգէ մեր բերք արժանիք:

Տապար խոփ մանգաղ, հատու սուր ու զէնք  
 Քաջ կուել կոփել ամենքս զիտենք.  
 Գիտենք նըրաթել և հիւսել կտաւ,  
 Կամ կարել ազնիւ հանդերձ և հալաւ.  
 Բայց ո՞վ մինչ ցայսօր ելաւ ի հանդէս  
 Եւ զովեց յարգեց մեր արհեստ և մեզ:

Ո՞վ ժիր գործունեայ Հայ ազգի մշակք,  
 Դուք մի գանգատիք, թէ ձեր ջան վաստակ  
 Չըյարգեց գովեց աշխարհի առաջ  
 Ոչ տէր ոչ ծառայ, և ոչ իշխան քաջ.  
 Զեր ճգանց փոխան այդ պատիւ յարգանք  
 Մարգիկ ձեզ կ'տան ճիշտ այն ժամանակ,  
 Երբ դուք ձեր վսեմ Լեզուով հայախօս,  
 Ուսմամբ արհեստով աիրէք մինչ Տօրոս.  
 Երբ դուք Հայաստան չափէք ծայրէ ծայր,  
 Մարգիք նենդ արդար կրթէք հաւասար.  
 Երբ դուք սըրութեամբ ձեր ամբիծ Հաւաս  
 Մինչ ձեր վերջին շունչ կըպահէք անխախտ.  
 Յայնժամ կ'թողնէք աշխարհում համբաւ,  
 Ինչու Մեսրովին էլ հէնց այդպէս արաւ  
 Ու այնպէս մեռաւ:

«ՕՐՀՆԵՑԼ ՏԵՐ ՈՒՅՈՌ ԻՆՉ ԶԵՐԳԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՈ»  
Ժամագիրք.

Հանել եմ աշխարհ իմ կտրիչ որդիք,  
Ոչ զիտեմ օրէնք, և ոչ հօր պարտիք,  
Որ նոցա այնպէս մարգեմ ազգիս մէջ,  
Որ որդունք չըլնեն, այլ խելօք մարդիկ.  
Ինձ արդարութիւն՝ ուսն օրհնեալ Տէր,  
Որ նոցա կըրթեմ ճըշմարիս հայեր:

Սովորում են այն, անգուլ անձանձիր  
Հայ աղջիկ տղայ ինձնից ուսում գիր.  
Բայց ես անզօր եմ ձիր չնորհ տաղանդ  
Քո պէս լիուլի տալ նոցա աւանդ.  
Ինձ արդարութիւն՝ ուսն օրհնեալ Տէր,  
Որ նոցա կըրթեմ բարեկիրթ հայեր:

Զերթ ձագ թեիս տակ առել են ծուար  
Ծանօթ անձանօթ, ազգական եղբայր.  
Բայց ես դեռ չունիմ այն ձեռք կառավար,  
Որ նոցա խաղաղ պահեմ հետ իրար.  
Ինձ արդարութիւն՝ ուսն օրհնեալ Տէր,  
Որ նոցա կըրթեմ միարան հայեր:

Վատթար մոլութիւնք զերթ մռայլ ամպիկ  
Պաղ պաղ ոտներով իջան իմ տանիք,  
Տանեացս վերեէն զէպ իմ ընտանիք,  
Ու բաժին տուին նոցա պիղծ չարիք.  
Ինձ արդարութիւն՝ ուսն օրհնեալ Տէր,  
Որ նոցա կըրթեմ բարեկալաշտ հայեր:

Դէսլ մեր սուրբ ժամեր, դէսլ իմ Աղդ անդօր  
Զունիմ ըզգօն սիրտ, զործեր փառաւոր.  
Զունիմ վաս բորբոք իմ մէջ այն Հաւատ,  
Որով շատ սրբեր ելան Քո Դըրախտ.  
Ինձ արդարութիւն՝ ուստ օրհնեալ Տէր,  
Որ արդար զործեր հանեմ Քո յեթեր:

Ապրում եմ ազատ, անկարդ անհաշիւ,  
Ոչ զիտեմ հօր յարգ, ոչ ծերի պատիւ.  
Ուր որ սաք դըրի բարութեան փոխան,  
Կախեցի այնտեղ չարութեան սատայն.  
Ինձ արդարութիւն՝ ուստ օրհնեալ Տէր,  
Որ զործով ցոյց տամ, թէ եմ հայասէր:

Թէ շէն գիւղերում, թէ ձոր յանապատ  
Իմ կորիչ ձեռքից կորան մարդիկ շատ.  
Հարց Քո սարերին, կասլոյա ծովերին,  
Ի՞նչ չեմ ես զոհել իմ չար կըրքերին.  
Ինձ արդարութիւն՝ ուստ օրհնեալ Տէր,  
Որ ջինջ հայ անուն բերեմ Քեզ նուէր:

Դաւով քըսութեամբ մինչ ցըրանտ և մահ  
Քերել եմ ի զուր մարզիկ անխընայ,  
Թէ իմ վատութիւն գաս հանել հանդէս,  
Ինձ չար կըրանես քան բիրտն Հերովդէս.  
Ինձ արդարութիւն՝ ուստ օրհնեալ Տէր,  
Որ ես էլ սիրեմ Քո պաշտած սուրբ սէր:

Կուրութիւն նախանձ, անվերջ ծուլութիւն  
Մաշեցին իմ կեանք, քանդեցին իմ տուն.  
Ես քանց այն թռչուն խեղճ եմ և թշուառ,  
Որ չունի դադար, և օրուան պաշար.

Ինձ արդարութիւն՝ ուսն օրհնեալ Տէր,  
Որ ես էլ յարդեմ աշխատանք և սէր:

Այս իմ պաշտելի, այ աղնիւ Հայեր,  
Աստուած պինդ պահի ձեր կեանք ու արե,  
Թէ որ միշտ այսպէս ձեր յանցանք ու զիղջ,  
Չեր վատթար գործեր, ձեր հոգի և խիղճ  
Բանաք անդադար Օրհնեալի առաջ  
Ու ձեզ յօգնութիւն իմնդրեք իւր սուրբ Խաչ,  
Կերդնում ձեր յարե, որ Օրհնեալն իւր յԱջ  
Միշտ իւր եթերից կօրհնէ ձեր որդիք,  
Ու նոքա կըլնեն ճշմարիտ մարդիկ.  
Կօրհնէ հայրաբար ձեր տգէտ մանկտիք,  
Ու նոքա կըլնեն բարեկիրթ մարդիկ.  
Կօրհնէ զթութեամբ ձեր աղդ համազդիք,  
Ու նոքա կըլնեն միաբան մարդիկ.  
Կօրհնէ մշտապէս ձեր տուն ընտանիք,  
Ու նոքա կըլնեն բարեպաշտ մարդիկ.  
Կըլսէ ընդ միշտ ձեր խնդիր մաղթանք,  
Ու անհետ կանէ ձեզնից տառապանք.  
Կըտայ ձեզ երկար, երջանիկ օրեր,  
Ու դուք չէք լինիլ ապաբախտ հայեր.  
Կըտնկէ ձեր մէջ սէր արդարութիւն,  
Ու դուք կունենաք ամբիծ հոյ անուն.  
Ապա թէ կապրէք անարդարութեամբ,  
Ու գեռ կըզործէք չարիք ձեր ձեռամբ,  
Ապա թէ անզիղջ կապրէք ընդունայն,  
Ու կըզրդովէք արդար Եհովայն,  
Են իսկ ձեր բաժինք չարիք ահաւոր,  
Որպիսին կըեց Անին փառաւոր:

«Յիշեալ Տէ՛ր զպաշաօնեայս քո, զծնողսն  
մեր, զվարդապետս, զեղբարս և այլն.  
Ժամագիրք.

**Յիշեալ ավ Տէ՛ր սրտագէտ,**

**իմ Ծնողներ կաթողին**

**Նոցա սրտի, մտքի մէջ**

**Միշտ կախ արա քո հողին,**

**Որ երկիւղիւ, դողութեամբ**

**Առ քեզ պահեն իմ հողին:**

**Յիշեալ ազգիս Վարդապետք,**

**Նոցա բանիւն ու գործով**

**Արա ցաւերն մեր անհետ.**

**Թող նոցա սուրբ գիրն ու բան**

**Համ փուշ պոկեն, համ վարդ տան:**

**Յիշեալ Եղբաբքս քո գլխով,**

**Որպէս տատրակ զգլիսով**

**Զագուց իւրոց թե ածեալ**

**Ոզչագուրէ քաղցրապէս,**

**Այնպէս և դու սէր տուր մեզ:**

**Յիշեալ Բնկերքս գեղեցիկ,**

**Որպէս սոխակ երդեցիկ**

**Միշտ վարդենեացն առընթեր**

**Սիրէ հանել զտիւ գիշեր,**

**Այնպէս և մեզ տնւր գըգուել:**

**Յիշեալ մեր ժիր Տնտեսին,**

**Տնւր լիութիւն, շատութիւն**

**Նորա հացին ու մըսին.**

Նորա մառանն ու մարագ  
Արա իբրև մի նիբակ:

Յիշեա ով Տէր, զՄւխտաւորս,  
Նոցա նուէր, պատարագ,  
Նոցա ձօնած տաք համբոյր  
Արա ընդ միշտ մեծայարդ  
Քո սուրբ Ժամուց վարագոյր:

Յիշեա ամեն Ռւղիոր—  
Երիտասարդ, ալհոր,  
Նոցա կոխած ճանապարհ  
Թէ որ ծուռն են, ուղիղ տար,  
Ով հոգատար Տէր արդար:

Յիշեա և այն Տընւորին,  
Ռը տեղ կոտայ նշղեհին,  
Թող այնպիսին կանթեկուած  
Միշտ քեզանից ունենայ  
Հաց ու պաշար չոր ու թաց:

Յիշեա դու և այն Մարդոց,  
Ռոնք վաստակ թափելով  
Շինել են ժամ ու դպրոց,  
Եւ կամ փողեր ցնցինելով  
Կարել են շատ լաց ու կոծ:

Յիշեա մեղքով կեղեքուող  
Յափշտակող և զԳող,  
Լզմատնիչս, ըզԶըկող,  
Նոցա արարքն ու գէշ բարք  
Առ ու քցիր ծովի տակ:

Յիշեալ զու և այն դերի,  
Որ ի դուռս օտարաց  
Միշտ հանապաղ դեգերի,  
Եւ այն վհատ Հիւանդաց,  
Որոնք կարօտ են դեղի:

Դու իշխանաց մեծ իշխան,  
Յիշեալ զիշխանս, ուր որ կան.  
Քո և նոցա թիոց տակ  
Մեղ ամենիս քո սիրով  
Արա մի անձ, մի զաւակ:

Յիշեալ և իմ Բարերարս,  
Որոնք ինձնից անբաժան  
Իմ կրթութեան փոյթ տարան,  
Եւ Հաւատով քաշեցին  
Ինձ քո շնորհաց նստարան:

### Խ Ե Ղ Ճ Ո Ւ Թ Ւ Ւ Ն .

«Զաշխարհն մեր առաջի մեր օտարը կերիցեն».  
Եսայ. Ա. 7.

Առատ ցորեն և դարի  
Ամենքս ունենք այս տարի,  
Թէ որ տիրէ սով աշխարհ,  
Մենք չենք մեռնիլ սովամահ.  
Բայց երբ խեղճ ենք, մեր ամբարք  
Պիտի վատնեն միշտ օտարք:

Ազնիւ զորդեր, կարպեաներ  
Ունինք փռած մեր տներ,

Ունինք նաև ահազին  
Կահ կարասիք թանկազին,  
Բայց երբ խեղճ ենք, մեր գոյք դարդք  
Պիտի խլեն միշտ օտարք:

Այծ ու ոչխար հօտերով,  
Նժոյզ ձի էշ եղն ու կով  
Ախոռներում կտպկապած  
Պահում ենք մեծ խնամքով.  
Բայց երբ խեղճ ենք, մեր արջառք  
Պիտի ուտեն միշտ օտարք:

Կանգուն կործան մնացած  
Շէնքեր ունենք հոյակապ,  
Որոց ահեղ տեսարանք  
Մեղ աղգում են պատկառանք.  
Բայց երբ խեղճ ենք, տւերակ  
Պիտի անեն բիրտ օտարք:

Գիտուն ու շատ հանճարեղ  
Մարդիկ ունինք ամեն տեղ,  
Որոնք ճիգ են թափում միշտ  
Բառնալ Ազգիս ցաւ ու վիշտ.  
Բայց երբ խեղճ ենք, նոցա վարկ  
Պիտի կոտրեն միշտ օտարք:

Քաջակորով վեհ հայեր  
Մարտի գոշտեր ենք թաղել,  
Ունինք այժմ էլ կարիչներ,  
Որք սոսի են կործանել.  
Բայց երբ խեղճ ենք, նոցա վարք  
Պիտի խլեն միշտ օտարք:

Գեղեցկաշէն դպրոցներ  
Ժամի դոներ ենք կանգնել.  
Եւ նոցա մէջ կըթում ենք  
Մատաղահաս մանուկներ.  
Բայց երբ խեղճ ենք, նոցա կարդ  
Կը խանգարեն միշտ օտարք:

Մինս պատուով, մինս հացով,  
Մինս անփող, մինս վարձով  
Նառայում ենք դոնէ դուռ  
Մեզ ձեռք բերել կերակուր.  
Բայց երբ խեղճ ենք, մեր վաստակ  
Պիտի լափեն միշտ օտարք:

Այս, քանի դեռ խեղճ ենք,  
Պիտի վշտեր միշտ կրենք.  
Մեզ համար դատ դատաստան  
Չունի աշխարհա այս ունայն.  
Մեզ հետ զրկանք հալածանք  
Պիտի տանենք գերեզման:

Բայց երբ կարթնենք գէթ մի օր  
Մենք չենք տեսնիլ այս բոլոր.  
Եւ արթնելու ձանապարհ  
Միմիայն այս է մեզ համար,  
Սիրենք միմեանց, մեր որդւոց  
Դնենք ուսման ճոխ դպրոց:

---

ԵՂԵՐՄ ԸՆ ԸՍՏԱՒԷԹ.

«Հրաժարիմք ի սատանայէ եւ  
յամենայն խարէութենէ նորա,  
ի պատրանաց նորա, ի խոր-  
շրգաց նորա, ի զնացից նորա»  
եւ այլն. \*

Ժամազիր:

Քեզ յայտնի է, ով իմ Տէր,  
Որ սատանէն աղնաւեր  
Քո սուրբ ձեռքից մինչ անդամ  
Խարեց հանեց հայր Ադամ:

Քեզ յայտնի է, ԵՇովայ,  
Որ ամբարիշտն սատանայ  
Պատրեց երբեմն մի Վասակ,  
Որի ձեռքով բաժանեց  
Մէր ու մանուկ, ծեր հասակ:

Քեզ յայտնի է, Տէր միայն,  
Որ սատանի խորհրդով  
Երբեմն մի չար Մեհրուժան  
Խաղաղ սրտով, անվրդով  
Ի հուր թափեց շատ մատեան:

Գիտես դու այն սատանայ,  
Որ իւր հուժկու զնացքով  
Որսաց երեք քահանայ,—  
Պետրոս Սահակ և Զանդակ,  
Որոնք թողին ուրացան  
Երենց պաշտօն պատարագ:

Գիտես դու այն սատանայ,  
Որ վեր համեց չար գոռող  
Յազկերտ Շապուհ ու Պերող,  
Գիտես սոքա անընդհատ  
Բերան առան մեր հաւատ:

Քեզ յայտնի են, ով իմ Տէր,  
Մուսէ Մահմետ Աբդուլլայ,  
Որոց ձեռքով սատանայ  
Վառեց խաշեց մեր երկիր,  
Միշտ անելով տարագիր:

Քեզ յայտնի են Կոշմ Պէքիր,  
Թէ ո՞նց եղան անբաժան  
Սատանայի որդեգիր.  
Որոց ձեռքից տաք հալաւ  
Իրենց ազգն էլ շըհազաւ:

Գիտես դու այն սատանայ,  
Որ Հոլ Հասան ու Եղիտ  
Բռնեց իրեն պաշտօնեայ,  
Որոց ձեռքից կուշտ բլիթ  
Ոչ Հայ կերաւ, ոչ Եղիտ:

Գիտես դու այն սատանայ,  
Որ ամեն տեղ կամարար  
Էնտրեց իրեն Լէնկթէմուր,  
Որի ձեռքից մի պարզ ջուր  
Ոչ հայ խմեց և ոչ թուրք:

Քեզ յայտնի է չար Տուղրիլ,  
Ո՞ն իւր ձեռին վէմ ու զիլ

Երբ արշաւեց մեր երկիր,  
Գիտես թէ ի՞նչ դուռ զրկէց  
Այս սատանէն խորտակեց:

Քեզ յայտնի է ժաման Բուղայ,  
Ո՞վ նրանից չէր դողայ.  
Երբ սա մտաւ Հայաստան,  
Որի երգիկ լաց ու թաց  
Զընասաւ քեզ՝ ով Աստուած:

Զես յիշում դու լիբր Յուսուփ,  
Թէ ի՞նչ փոսեր և ի՞նչ զուր  
Փորեց մեր խեղճ Ազգի դէմ.  
Ո՞ւմ դուռը, կամ ում կուռը  
Զընախջախեց սրա սուրը:

Զես յիշում դու Զարմաղան,  
Էս սատանի մեծ տըղան  
Երբ զլորուեց Հայաստան,  
Ո՞ր մի տանից թան թացան  
Զըմերացան շըքացան:

Զես յիշում դու Ալփասլան—  
Այս սատանի միակ սան.  
Թէ չես յիշում այս դաղան,  
Իւր չարութեան սև պտուղ  
Ցիշիր Անին մեր կործան:

Զես յիշում դու Նատրշան,  
Որին խեղգեց Դրողն ու մահ.  
Այս սատանի չար հրեշտակ  
Ո՞ւմ չըտուեց ոտի տակ,  
Ի՞նչ տեղ չարեց բըիշակ:

Ծանօթ է քեզ՝ Բարեբար,  
 Եւ սատանի կամաբար  
 Մեծն ի չարս Շահաբաս,  
 Որ սոսկալի լըրութեամբ  
 Խեղդեց Հայոց հանապագ։  
 Իսկ «ի չար զօրութենէ նորա»  
 Մեզ ի՞նչ մնաց, էլ ի՞նչ կայ։

Ի զօրութենէ նորա  
 Դըւին տուինք սև հողին,  
 Անին դրինք նրա կողին։  
  
 Ի զօրութենէ նորա  
 Մեր սուրբ տեղիք դասադաս  
 Զրին տուինք մաս առ մաս։

Որ մինն ասեմ, ով իմ Տէր,  
 Որ սատանէն տընաւեր  
 Մեզ չէ տուել կոծել լալ  
 Իւր «զօրութեամբ» թունաբեր։

Աշացս առաջ քանի կան  
 Մեր տառապեալ Մուշն ու Վան,  
 Եւ նրանցից բաժանուած  
 Հազար հայեր անսլաշտպան։

Աշացս առաջ քանի կան  
 Կարին Զէյթուն ու Սասուն,

Եւ նրանցից վերացած  
Արք և կանայք փափկասուն.

Աշացս առաջ քանի կան  
Մոլիր դարձած հայ գեղեր,  
Անմեղ արեամբ ոռոգուած  
Դաշտ, անապատ, շատ տեղեր.

Աշացս առաջ քանի կան  
Մեր հէք Բագուն Երևան,  
Եւ սոցա հետ սուզ նստած  
Շուշին Շարուր Նախչուան.

Աշացս առաջ՝ զէն ձեռին  
Քանի դեռ կան լլստուած  
Թուրքի որդին ու քեռին,  
Եւ փնչում են դաղաղած  
Սատանայի խորհրդով  
Աշխարհս շինել արեան ծով.

Պիտի խնդրեմ աղերսեմ,  
Եւ միշտ քեզ Տէր՝ այս ասեմ,—  
Որ պահես մեզ, մեր Աշխարհ,  
Որ չկոխուենք համարձակ  
Սատանայի մահարեր  
Ծուռ ու ճնկլատ ոտի տակ.  
Որ չըկորչենք հանապազ  
Թէ լիովին, թէ մաս մաս  
Սատանայի կամարար  
Պաշտօնէից ձեռքի տակ:

---

ՀԵՒԵՉՈՒՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՅՍՏԱՎԱՐ.

• Անին եմ շատ մարդաբնակ  
Մասցել եմ դառն աւերակ»  
Աղ. վ. Արարատեան».

«Ոլոր մօլոր Կուրն եր գալիս» երդի եղանակով:

**Տիտուր** տիտուր ձայն եմ տալիս իմ Ախուրեանէն,  
**Զկայ** ոչ ոք ձայնս լսող Շիրակ գաւառէն:  
**Հայ** եմ կանչում միշտ յուսահատ նորա ափերէն,  
**Իմ** արձագանք ես եմ լսում խոր խոր ձորերէն:  
**Ո՞հ** կուրացան իմ սէդ աչեր անյագ ողբալէն,  
**Ինձ** սփոփանք ոչ ոք բերեց ծերուկ Արաքսէն:  
**Ո՞հ** թուլացան իմ թէ թիկունք օտար ձեռքերէն,  
**Ինձ** ոյժ կորով ոչ ոք տուեց Մասեաց քաջերէն:  
**Ազակեցան** իմ դաշտավայրք անջուր մընալէն,  
**Զեկան** դարձան Եփրատ Տիգրիս նոցա վըրայէն:  
**Անկան** կործան իմ ամրութիւնք ժանտ բիրտ ազգերէն,  
**Ոչ** ծեր Մասիս, ոչ Արագած զըթաց իմ վըրէն:  
**Պղծեցին** իմ շքեղ տաճարք քուրդ թուրք անօրէն,  
**Ինձ** ոչ նըւէր, ոչ օգնութիւն հասաւ Տարօնէն:  
**Ցիր** ցան արին անզութ օտարք որդիքս իմ զրկէն,  
**Ինձ** ոչ զէնքեր և ոչ զօրքեր հասաւ Կարինէն:  
**Ցաւեր** ունիմ ես բիւրաւոր, բայց ով իւր տեղէն  
**Թնդաց** շարժեց դարման բերել հզօր Սիւնիքէն:  
**Գուրս** եկ Աշոտ, աղիողորմ ողբա քո շիրմէն,  
**Տես** թէ ինչպէս կորաւ Անիդ անսիրտ հայերէն:  
**Ել** դու արքայդ, Հայոց մեծաց, ել քո տապանէն,  
**Ել** այց արա մեծ թշուառիս՝ հոգուդ սատաղէն:

ՀԵՅԱՅԻ ՀԻՆ ԱՐԵՒԲԻԹ ՔԸՆԱԳԻ ԱԿՐՈՑ.

**Պայեցէք Արմաւրին**  
**Ով հայ պատանիք,**  
**Ողբացէք իւր վիճակ,**  
**Կորցրած և իւր փառք:**

**Թափեցէք ով անցորդք -**  
**Կանայք օրիորդք,**  
**Այս քաղաքիս վերայ**  
**Արցունք անխընայ:**

**Զի երբեմն ձեզ նման**  
**Քաղաքս հէք թշուառ**  
**Ունէք ժիր, պատուական**  
**Որդիք անհամար:**

**Ունէք վեհ աշտարակք,**  
**Պալատ բերգորայք,**  
**Սուր և զէն և զինուոր**  
**Բագինք փառաւոր:**

**Իսկ այժմ կործանուած**  
**Զեզ և օտարաց**  
**Զբոսանաց և պարի**  
**Դարձած է տեղի:**

---

ԴԵՂԹՈՒԿԵՆ ՀԵՅՈՅ ՅԻՇՏ.

«Խանասուրայ դաշի կուուի» երգի եղանակով.

**Քուրդ Թուրք Օսմանք ձեռք ձեռք տուած խուժեցին  
Մեր երկրի մէջ, առօք փառօք որտեղ ասես բազմեցին.  
Այս մենք տեսանք ու լոեցինք ու տարանք,  
Եւ ոչ մէկիս սրտին առաւ նրանց լիտի արշաւանք:**

**Մեր շէն երկրի հող ու ջրին տիրացան,  
Մեր շէն երկրից մեղքոնութեամբ արին խիզառ ցիր ու  
ցան.**

**Այս մենք տեսանք ու լոեցինք ու տարանք,  
Եւ ոչ մէկիս սրտին առաւ նրանց խիզախ հալածանք:**

**Նրանց բազկով ընկան, եղան աւերակ  
Մեր հայրենի հաղարաւոր զիւղ ու աւան ու քաղաք.  
Աչքով տեսանք այս տընաւեր աւերմունք,  
Եւ ոչ մէկիս սրտին առաւ նրանց վատթար արարմունք:**

**Նրանց բազկով մեր աղօթից սուրբ տեղեր  
Քայքայուեցին տապալուեցին ի հիմանէ վայրուվեր.  
Այս մենք տեսանք ու լոեցինք ու տարանք,  
Եւ ոչ մէկիս սրտին առաւ նրանց տուած բիւր զիանք:**

**Եկ բաց անենք մեր հարց պահած թուղթ մատեանք,  
Կ'ոչ նեղութիւն նրանց ձեռքից չքաշեցին մեր խիզանք.  
Այս մենք տեսուանք ու լոեցինք ու տարանք,  
Եւ ոչ մէկիս սրտին առաւ նրանց կրած չարչարանք:**

**Կարեկցութեան, ողորմութեան, սիրոյ տեղ  
Մեր հարց վրայ անզթութեան թափեց անձրև ու հեղեղ.  
Այս մենք տեսանք ու լոեցինք ու տարանք,  
Եւ ոչ մէկիս սրտին առաւ մեր թշնամեաց բիրտ լլկանք:**

Իբրև դալար մատաղատունկ ձիթենիք  
Ընկան Հայոց հողի վերայ նրանց սրով մեր որդիք.  
Այս մենք տեսանք ու լռեցինք ու տարանք,  
Եւ ոչ մէկիս սրտին առաւ նրանց կսկիծ ու տանջանք:

Բանտ ու այրեր եղան նրանց տուն ու տեղ,  
Կոշտ ու կոպիտ պատառուուն խարազն հագան շորի տեղ.  
Արար աշխարհ տեսաւ նրանց խեղճութիւն,  
Բայց ոչ մէկիս սրտին առաւ մեր թշնամեաց լըբութիւն:  
Ամայութիւն, սով, մահ տիրեց ամեն տեղ,  
Քար ու քացախ, բանջար ու խոտ սև ճաթ կերան հացի  
տեղ.

Երկինք երկիր տեսաւ այս մեծ անգիտութիւն,  
Բայց ոչ մէկիս սրտին առաւ մեր թշնամեաց ըրտու-  
թիւն:

Մէր ու մանուկ տուին նրանք ստի տակ,  
Մեր աչագեղ տղայ աղջիկ արին նրանք խայտառակ.  
Այս մենք տեսանք ու լռեցինք ու տարանք,  
Եւ ոչ մէկիս սրտին առաւ մեր թշնամեաց այս ձաղանք:

Թէ մենք մարդ ենք և Աստաւծոյ սուրբ պատկեր,  
Զգանք ամօթ ու պատկառանք ու կատարենք մեր պարտ-  
քեր.

Եւ այն աւեր, սասանութիւն, ողբ ու կոծ  
Ինչ որ թափեց մեր թշնամին մեր աշխարհի դիրկ ու ծոց,  
Նկատ առնենք, ու շէն պահենք մեր ծննդեան օրօրոց:

ՀՐԵՓՆԵՑՑ ԸԼԱՑԿԵՑՑՈՑ 1877 Թ.

«Պէյօղլինըն քօնաբլարը» թուրքերէն երգի եղանակով.

**Բաց ենք թողնում անդութ քրդին մեր դռներ անփակ,**  
Ա՛յս Ալաշկերտ, վախ Ալաշկերտ.\*

Մեր իւղ, մեր հաց, նաև բոլոր մեր ապրանք,  
Մեր մամուապատ ննջեցելոց դամբարանք:

Հեռանում ենք քեզանից, բայց անկումդ ուր դուժենք.  
Ի՞նչ դեղ դնենք հուր, սուր կրած մեր վերքին,  
Երբ չըկարաց օդնել ձեռք քաջ բժշկին:

Պիտի բուրեն ցօղով շաղով ներկուած քո բոյսեր  
Մեր երեսին անուշ բուրմունք, հարցնումենք,  
Թէ տատասկով քեղ միշտ ծածկուած կտեսնենք:

Պիտի լսենք քո մէջ ճռուող թոշնոց մեղմ ձայներ,  
Որք զօրն ի բուն կը կախարդեն մեր սրտեր.  
Թէ մխիթար քեղ կը գտնենք քու բուեր:

Կը զովանանք գէթ միւս անգամ գետերիդ ափին,  
Որք կցըէին մեր հոգ, թախիծ, ցաւ տխուր.  
Թէ սիրտ պղտոր կը մոռանանք քո հող ջուր:

Կը վայելենք քո բարեհամ գեղեցիկ բերքեր,  
Որոց նմանն դեռ օտար հող չէ ծնել.  
Եթէ անզարդ կը պղտէ քեղ ձիւն ձմեռ:

\* Ամեն տան առաջին տողի վերջում կը կնել  
«Ա՛յս Ալաշկերտ, վախ Ալաշկերտ».

Կը զօրանսան մեր թոյլ ձեռներ կրկին մաճ բռնել,  
Հացով լցնել մեծ ամբարներդ դատարկ,  
Թէ այս վերջին չոր պատառն է մեր թոշակ:

Մնաս բարեաւ մեր անտերունչ հայրենիք թշուառ,  
Արքան մեզ դու խնամեցիր մայրաբար,  
Գերեզմանում թէն լինինք չենք մոռնար:

---

ՀՕՐՄ ՏՅԱԿԵՑ ՊԵՐՏԵԶԵՂ.

Հազար ութհարիւր ութուն երկուսին,  
Երբ հայրս մեռաւ գեկտեմբեր ամսին,  
Տուաւ ինձ բաժին միայն մի պարտէզ  
Ու օրհնելով ինձ՝ ասաց նա այսպէս.—  
«Սիրելի որդեակ, երբ իմ պապերից  
Այդ անգին պարտէզ ընկաւ իմ ժիր ձեռ,  
Չուրկ էր դա խսպառ ամռուր պատերից,  
Չըկային իւր մէջ ոչ վարդ ոչ շուշան,  
Եւ ոչ բնութեան մի չքնաղ նշան.  
Գարուն երբ կըզար, թոչուններ անգամ  
Զէին ոտք կոխիլ այդ պարտէզ խոպան:  
Յաւալի էր ինձ, սիրելի որդեակ,  
Թողնել այս պարտէզ անշուք անմշակ.  
Ուստի ձեռք տուի ամենայն ջանքով  
Մշակել դրան, պահել խնամքով:  
Տնկեցի իւր մէջ ծաղիկ ու տունկեր,  
Նորից շինեցի իւր խարխուլ պատեր.  
Որպէս զի պահեմ այդ տունկեր դալար,  
Հանեցի իւր մէջ առուակներ վարար:

Բանում էի ես այսպէս ողջ ցերեկ,  
 Եւ հէնց այդ էր որ չըտեսայ երբէք  
 Սիրուն պարտիզիս վնասէր ազատ  
 Ցեց ու մեցի պէս թրթուռ կամ միջատ:  
 Ահա մեռնում եմ, սիրելի որդեակ.  
 Բայց իմ խօսք պատուէր քեզ այս է միակ,—  
 Որ ինսամք տանես պարտիզիս վրայ,  
 Ինչպէս անիմնայ ես ինքս տարայ:

---

Դեռ նոր էր անցել սարերից բուք ձիւն,  
 Դեռ նոր էր բացուել ցանկալի գարուն,  
 Այն ինչ անդանդաղ ես էլ հօրս պէս  
 Պիտի գնայի գործել իմ պարտէզ.  
 Աւաղ իմ բախտին, տարերքն ահազին  
 Իւր բուք փոթորիկ փշելով ուժգին,  
 Խամրեց իմ պարտէզ իւր բիւր տունկերով,  
 Խիստ վնասելով նաև վարդերին:

---

### Ը Բ Ե Բ Ե Տ Ե Յ Ի Յ Յ Յ Ի Գ Ա Թ Ե Ղ.

«Երիթիք զուարք ա՛նարկէ,» երգի եղանակով.

**Ա**հա աղէք, իմ այգին  
 Յանձնում եմ ձեր սուրբ խղճին.  
 Մալուսրք, շուտ շուտ ծալ կանէք,  
 Թաղուսրք, ժիր ժիր կը բանէք.  
 Ասլա թէ ոչ եկող տարի  
 Տէր չենք լինիլ խաղողին,  
 Դէ թումբ բռնէք, այ Աահակ,  
 Մելիք Մելքոն իմ Միսակ.

Մատը բոնէք շատ քնքոյշ,  
Որ չը ջարդէք անզգոյշ.  
Ապա թէ ոչ եկող տարի  
Տէր չենք լինիլ խաղողի:

Դուք էլ թաղունրք, քացի տուէք,  
Կունձդղ ու կոշտեր վըրէն դրէք.  
Միայն զիժ զիժ մողու պէս  
Ինչ կտեսնէք՝ չը կոտրէք.  
Ապա թէ ոչ եկող տարի  
Տէր չենք լինիլ խաղողի:

Դէ տղէք ջան, ջալդ տրէք,  
Բահով ձեռքով պինդ ծածկէք  
Թումք ու Շը ջան ու Տախտակ,  
Մատ ու Կուդըտակ ամեն ծակ.  
Ապա թէ ոչ եկող տարի  
Տէր չենք լինիլ խաղողի:

Աստուած պահի ձեր արև,  
Թէ որ ցից է մին մին թուփ,  
Խոտ ու խչմար ու տերե  
Վըրէն զըրէք իրրե խուփ.  
Ապա թէ ոչ եկող տարի  
Տէր չենք լինիլ խաղողի:  
Վերջապէս  
Ասում եմ ձեզ,

Երբ կապում է թաղուորը  
Ծալի ծէրը բէլաթով,  
Ծալի ծէրը ծալուորը  
Պէտք է հուպ տայ իւր բթով,

Որ բէլաթի տակ ծալերը  
Ճկուեն, ճկուեն մի շարքով:  
Ապա ինքն ժալռւորը,  
Ոչքը անկած թաղուորին,  
Պիտի հսկէ անդադար  
Համ բէլաթին, համ ժալին,  
Եւ թէ ո՞նց է նա ժիր թաղում  
Իւր պինդ խեղդած մեռելին:

Երբ թաղուորը դիմի իստակ  
Ծալը մինչև քօքի տակ  
Թաղեց, պրծաւ քրանամուխ,  
Ապա ծալուորը թաղուորին  
Պիտի ձայն տայ սրտաբուղին.—  
«Զան, ապրիս, մեռնիմ թերթիգ»,  
Ապա ձեռք տայ միւս ծալին:

Օրհնեալ լինիք,  
Սիրելիք,  
Զեր տուած խէրն ու վաստակ  
Պիտի լինին այս մենակ,  
Որ Մատ Տաշնակ ու Կուդրակ  
Զընկնեն ցրտի բքի տակ.  
Ապա թէ ոչ եկող տարի  
Տէր չենք լինիլ խաղողի:

Ահա այս է յիզաթաղ,  
Որ հեշտ բան չէ, և ոչ խաղ:  
Եթէ այսպէս կը թաղէք  
Շողակարիս շէն այգին,  
Կտամ ձեղ քառասուն կոպէկ,

Օրհնելով ձեզ սրտագին.  
Իսկ թէ այսպէս դուք չթաղէք,  
Հէտ չերկաք իմ աշքին:

---

Ի ՎԵՏԵԿԱ ՍԻՐՑԻ ԵՎ.

Էանց ձմեռն ցրտագին  
Զիւն և սառն հալեցան.  
Մինչ յերբ ի քեզ անսպառ  
Հոգ և թախիծ կան մնան:

Եկն դարուն, և մարդիկ  
Յնծան խնդան թռչնոց պէս.  
Մինչ յերբ զքե տիրութեան  
Արկեալ զքօղ հեծեծես:

Վշտաց ի դուք զքեզ յաւէժ  
Մինչ յերբ առնես դահավէժ.  
Մինչ յերբ խաւար մթագին  
Յաւելցին քեզ ահագին:

Զտիւ և զիշեր անկենդան  
Յաւովք նեղիս զանազան.  
Զինչ որդն զքեզ նենդաւոր  
Կրծէ խայթէ թռւնաւոր:

Արիացիր օն դամ մի  
Բանալ զսիրտ յարկի:

---



1874-1875

